Հավելված N 14
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2025 թվականի սեպտեմբերի 25-ի N 745-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) թվայնացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) կիբեռանվտանգության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ **(ծածկագիր՝ 24-32.1-Մ2-12)**:

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները.

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր կամ ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վազգեն Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1.Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Գործառույթները՝

1) Իրականացնում է կիբեռանվտանգության միասնական քաղաքականության, օրենսդրության, գործողությունների ծրագրերի, կիբեռհասունության բարձրացման միջոցառումների և համապատասխան միջազգային պարտավորությունների կատարման աշխատանքները,
2) իրականացնում է տվյալների կառավարման համապարփակ քաղաքականության մշակումը, տվյալների փոխգործելիությունը, հրապարակման, փոխանցման, սահմանափակման, արխիվացման և ստացման միասնական մոտեցումների ձևավորման աշխատանքները,
3) իրականացնում է արհեստական բանականության և տվյալագիտության միասնական քաղաքականության մշակման աշխատանքները՝ ներառյալ օրենսդրական դաշտի վերլուծություն, կարիքների գնահատում, կիրառման խթանում, և հետազոտական ծրագրերին աջակցությունը՝ մասնավոր և ակադեմիական հատվածների համագործակցությամբ,
4) իրականացնում է ամպային ծառայությունների միասնական քաղաքականության, ստանդարտների, սկզբունքների և տեխնիկական ենթակառուցվածքի ձևավորման միջոցառումների մշակման աշխատանքները,
5) իրականացնում է արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային և միջգերատեսչական հանձնաժողովների, համագործակցային հարթակների, պայմանագրերի և ծրագրերի մշակման գործընթացները,
6) իրականացնում է միջազգային պայմանագրերով ու համաձայնագրերով նախատեսված կիբեռանվտանգության ոլորտի հանձնառությունների կատարումը,

7) իրականացնում է արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցմանն ուղղված քաղաքականությունների, ուղեցույցների և ընթացակարգերի մշակման աշխատանքները,
8) իրականացնում է արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջպետական համագործակցության ծրագրերի պլանավորման, համակարգման, մշտադիտարկման և գնահատման աշխատանքները,
9) իրականացնում է արհեստական բանականության կիրառման ցուցանիշների հիման վրա մասնագիտական վերլուծությունը:

Իրավունքները՝

1) Կիբեռանվտանգության, տվյալների միասնական քաղաքականության և ամպային ծառայությունների միասնական քաղաքականության, ռազմավարությունների մշակման նպատակով պետական կառավարման համակարգի մարմիններից ստանալ տեղեկատվություն,
2) տվյալագիտության, արհեստական բանականության և դրան առնչվող ոլորտային կարգավորող օրենսդրական դաշտի վերլուծության, գործողությունների ծրագրի մշակման և իրականացման նպատակով պետական կառավարման համակարգի մարմիններից ստանալ տեղեկատվություն,
3) ստանալ արհեստական բանականության կիրառման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն
4) արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային և միջգերատեսչական հանձնաժողովների, համագործակցային հարթակների, պայմանագրերի և ծրագրերի մշակման նպատակով պետական կառավարման համակարգի մարմիններից ստանալ տեղեկատվություն,
5) ներկայացնել առաջարկություններ արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցմանն ուղղված քաղաքականությունների, ուղեցույցների և ընթացակարգերի մշակման վերաբերյալ.

Պարտականությունները՝

1) կատարել կիբեռանվտանգության միասնական քաղաքականության, օրենսդրության, գործողությունների ծրագրերի, կիբեռհասունության բարձրացման միջոցառումների և համապատասխան միջազգային պարտավորությունների կատարման աշխատանքները,
2) կատարել տվյալների կառավարման համապարփակ քաղաքականության մշակումը, տվյալների փոխգործելիությունը, հրապարակումը, փոխանցումը, սահմանափակումը, արխիվացումը և ստացումը, միասնական մոտեցումների ձևավորումը,
3) մշակել արհեստական բանականության և տվյալագիտության միասնական քաղաքականությունը՝ վերլուծելով օրենսդրական դաշտը, գնահատելով կարիքները, խթանելով կիրառումը; աջակցել հետազոտական ծրագրերին ՝ մասնավոր և ակադեմիական հատվածների համագործակցությամբ,
4) մշակել և ձևավորել ամպային ծառայությունների միասնական քաղաքականությունը, ստանդարտները, սկզբունքները և տեխնիկական ենթակառուցվածքը,
5) կատարել արհեստական բանականության և տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային և միջգերատեսչական հանձնաժողովների, համագործակցային հարթակների, պայմանագրերի և ծրագրերի մշակման գործընթացները,
6) կատարել միջազգային պայմանագրերով ու համաձայնագրերով նախատեսված կիբեռանվտանգության ոլորտի հանձնառությունները,

7) մշակել արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցմանն ուղղված քաղաքականություններ, ուղեցույցներ և ընթացակարգեր,
8) պլանավորել, մշտադիտարկել և գնահատել արհեստական բանականության, տվյալագիտության, կիբեռանվտանգության և հարակից ոլորտներում միջպետական համագործակցության ծրագրերը
9) կատարել արհեստական բանականության կիրառման ցուցանիշների հիման վրա մասնագիտական վերլուծություն:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1.Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համակարգչային համակարգերի մշակման և վերլուծության կամ ծրագրավորման կամ համակարգչային համակարգերի ճարտարագիտության կամ մաթեմատիկայի կամ ճարտարագիտության կամ տնտեսագիտության բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Փաստաթղթերի նախապատրաստում
3. Բանակցությունների վարում
4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: